ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

—

Մեր խմբագրութեան հասած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ արդարև միանգամայն անտեղի են եղել «Մուրճի» այս տարուայ յունուարի համարում Պարսկաստանից տպուած մի նամակի այն խօսքերը, որոնք արդէն հիմնովին հերքուած են երկրորդ №-ում զետեղուած Խորէն վ. Տէր-Վարդանեանի նամակով։ Խմբագրութիւնս շատ ցաւում է, որ ակամայ այդ սխալմունքի մէջ է ընկել։ Ինչպէս դժուար չէ եզրակացնել «Մուրճում» լոյս տեսած յօդուածներից՝ մեր խմբագրութիւնը Պարսկաստանի բարօրութեան և առաջադիմութեան նախանձախնդիր է և անկեղծ համակրանքով է վերաբերւում այն բոլոր ձեռնարկութիւններին, որոնք ներկայումս սկսւում են Պարսկաստանում ազգաբնակութեան բարոյական և մտաւոր վերանորոգութեան համար։

—

Տպագրելով «Մուրճի» ներկայ համարում պ. Շիրվանզադէի պատմուածքը, մենք այդ առիթով պարտք ենք համարում յայտնել հետևեալը. ի նկատի ունենալով, որ մեր ինքնուրոյն գեղարուեստական գրականութեան մէջ աշխատողների թիւը շատ չէ, «Մուրճը» միայն իր բելլետրիստական բաժնում կ'ընդունէ՝ առանց գրական ուղղութիւնների հարց յարուցանելու այնպիսի գրուածքներ, որոնք բաւարարութիւն են տալիս խմբագրութեան պահանջներին և որոնք չեն պարունակում իրանց մէջ մեր ամսագրի ուղղութեան և աշխարհայեցողութեան հակառակ տենդենցիա կամ ոգի։

—

«Մուրճ» ամսագրի այս տարուայ յունուար և փետրուար ամիսների համարները սպառուած են, ուստի նոր բաժանորդներին այսուհետև ուղարկուելու են համարները միայն մարտից սկսած։ Մեր խմբագրութիւնը երկրորդ հրատարակութեամբ լոյս կ'ընծայի «Մուրճի» յունուարի եւ փեsrուարի համարները միայն այն դէպքում, երբ այդ համարները ցանկացող sարեկան բաժանորդների թիւը կը հասնի 100-ի։

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Կոնստանցա. Բ. Ը. Վ.—30 ֆր. ստացանք։ Համարները ուղարկուած են։

Բուրէէ. Ընթերցարան հայոց.—Բաժանորդագինը 30 ֆրանկ է. ուղարկուած են №№ 1—4։

Փիլիպպոպոլ. Գրասիրաց Եղբայրական Վարչութեան.—Պիտի ուղարկէք ամբողջ բաժանորդագինը։

Շուշի. Ա. Զ. Նիւթի շատութեան պատճառով դեռ ժամանակ չենք ունեցել ծանօթանալ։

Մոսկուա. Պ. Ս. Շահազիզեան.—Ձեր 10 ռուբլով ուղարկում է „Մուրճ“ Աշտարակի գիւղական դատարանին։

Երեւան. Ա—Դօ.—Ստացուել են։ Անյարմար են։

«Մուրճի» հին բաժանորդներին.—1900 թուի բաժանորդները թող բարեհաճեն շուտով լրացնել բաժանորդագնի մնացորդը, որպէս զի խմբագրութիւնը վաղօրօք իմանայ իր տարեկան բաժանորդների թիւը։

ՎՐԻՊԱԿՆԵՐ

«Մուրճի» ապրիլի համարում մտել են ի միջի այլոց հետևեալ վրիպակները.

էրես	տող	տպուած է	պէտք է լինի
102	28	նրանք ունենում էին	նրանք երբ ունենում էին
107	38	դիւրալի պատմութիւններով	սխրալի պատմութիւններով
109	27	զսպելու	զսպուելու
112	20	են ենթարկում	է ենթարկում
119	17	երկուան էր	երկուան էլ

Հրատարակիչ եւ ժամանակաւոր խմբագիր՝

Կ. ԿՐԱՍԻԼՆԻԿԵԱՆ